

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՊՈՒՏԱՏ
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

Մոսկվա, «Մոսկվա» հյուրանոց

Հաստատում եմ իմ 18 սեպտեմբեր 1990 թվականի հեռագիրը Ձեր ծննդյան տարեդարձի առթիվ: Այսօր, 20 սեպտեմբեր, հեռագրում եմ Ձեզ իմ ծննդյան տարեդարձի առթիվ: Անձամբ եւ պարտք եմ զգում մի քանի տարի ևս ապրել՝ տեսնելու համար մեր ժողովրդի արդար սպասումների իրականացումը: Համոզված եմ, որ Դուք ևս այդ պարտականությունը ունեք: Ես չեմ կարող ապրել առանց Ձեզ: Կրկին խնդրում եմ բավ համարել Ձեր հացադուլը, որ արդեն իսկ իր բարերար դերը կատարեց: Աշխարհի խիղճը ցնցեց: Հրավիրում ենք Ձեզ Հայաստան, որպեսզի միասին մտածենք ու գործենք՝ արագացնելու համար արդարության հաղթանակը:

Սիրով և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
21 սեպտեմբեր 1990 թ.